
Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ **ՀՀ, Կոտայքի մարզք. Արուսյան
Սահմանադրության հրապարակ թիվ 12:**

Շինության տեսակը՝ **հիմնական շինություն:**

Թույլտվության գործողության ժամկետը՝ **01 հունվարի 2022թ.-ից մինչև 31
դեկտեմբերի 2022թ.-ը:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2022 թվականի N 3590

**«ՍԵՐԱՑԻՅԱՆ ԶԵՎԵԼԵՐԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ
ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Արմվյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 24-Ն որոշման, հիմք ընդունելով «ՍԵՐԱՑԻՅԱՆ ԶԵՎԵԼԵՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը (մուտք՝ 2022 թվականի նոյեմբերի 09-ի N S-1354)։

1. «ՍԵՐԱՑԻՅԱՆ ԶԵՎԵԼԵՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2022 թվականի ընթացքում Արմվյան համայնքի Առինջ գյուղի Գ թաղամասի 9-րդ փողոցի թիվ 2 առևտրի սրահի վաճառատեղում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 37 կցվում է)։

2. «ՍԵՐԱՑԻՅԱՆ ԶԵՎԵԼԵՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է Արմվյանի համայնքապետարանի 900105002985 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 50 000 (հիսուն հազար) դրամ։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՍԵՐԱՑԻՅԱՆ ԶԵՎԵԼԵՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. նոյեմբերի 10

ք. Արմվյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԹՄԱ - 37

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ
ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ
ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

Տրված՝ 10 նոյեմբերի 2022թ.

Թույլատրված գործունեության անվանումը՝

Թանկարժեք մեքուղներից պատրաստված իրերի առք ու վաճառք:

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպատիրական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝

«ՍԵՐԱՑԻՅԱՆ ՋԵՎԵԼԵՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, ՀՀ ք. Երևան Շենգավիթ Ս. Զորավարի փ. 482. 11 բն., ՀՎՀՀ՝ 02290114:

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ **ՀՀ Կոտայքի մարզ Առինջ գյուղ Գ թաղամաս 9-րդ փողոց թիվ 2 առևտրի սրահ:**

Թույլտվության գործողության ժամկետը՝ **01 հունվարի 2022թ.-ից մինչև 31 դեկտեմբերի 2022թ.-ը:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2022 թվականի N 3589

**«ՔՆԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԵՄԻՐԻ» ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ
ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Արովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 24-Ն որոշման, հիմք ընդունելով «Քնարիկ Հովհաննիսյան Վեմիրի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2022 թվականի նոյեմբերի 09-ի N Ք-5746)։

1. «Քնարիկ Հովհաննիսյան Վեմիրի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2022 թվականի ընթացքում Արովյան համայնքի Առինջ գյուղի Գ թաղամասի 9-րդ փողոցի թիվ 2 առևտրի սրահի վաճառատեղում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 36 կցվում է)։

2. «Քնարիկ Հովհաննիսյան Վեմիրի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Արովյանի համայնքապետարանի 900105002985 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 50 000 (հիսուն հազար) դրամ։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Քնարիկ Հովհաննիսյան Վեմիրի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. նոյեմբերի 10
ք. Արովյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՔՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԹՄԱ - 36

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ
ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ
ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

Տրված՝ 10 նոյեմբերի 2022թ.

Թույլատրված գործունեության անվանումը՝

Թանկարժեք մեքաղներից պատրաստված իրերի առք ու վաճառք:

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպատիրական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝

«Քնարիկ Հովհաննիսյան Վեմիրի» անհատ ձեռնարկատեր, ՀՀ, ք. Երևան Արաբկիր Բաբայան փ. 16 Ա շ. 19 բն., ՀՎՀՀ՝ 30955673:

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ **ՀՀ, Կոտայքի մարզ Առինջ գյուղ Գ թաղամաս 9-րդ փողոց թիվ 2 առևտրի սրահ:**

Թույլտվության գործողության ժամկետը՝ **01 հունվարի 2022թ.-ից մինչև 31 դեկտեմբերի 2022թ.-ը:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԴՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2022 թվականի N 3588

**«ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՎԱՆՈՅԱՆ ՎԱՐՂԻ» ԱՆՀԱՏ ԶԵՌԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2022
ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ
ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Արմավյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 24-Ն որոշման, հիմք ընդունելով «Հարություն Թուրվանոյան Վարդի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2022 թվականի նոյեմբերի 09-ի N Բ-5745)։

1. «Հարություն Թուրվանոյան Վարդի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2022 թվականի ընթացքում Արմավյան քաղաքի Հանրապետության պողոտայի թիվ 22/1/1 հասցեում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 35 կցվում է)։
2. «Հարություն Թուրվանոյան Վարդի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Արմավյանի համայնքապետարանի 900105201447 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 50 000 (հիսուն հազար) դրամ։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հարություն Թուրվանոյան Վարդի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. նոյեմբերի 10
ք. Արմավյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԹՄԱ- 35

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԷ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ
ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ
ՈՐՈՇԱԿԻ ՎԱՅՐՈՒՄ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

Տրված՝ 10 նոյեմբերի 2022թ.

Թույլատրված գործունեության անվանումը՝

Թանկարժեք մեդալներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպատիրական ձևը
և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու
վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝

**«Հարություն Թուրվանդյան Վարդի» անհատ ձեռնարկատեր, ՀՀ, ք. Երևան
Մալաթիա-Սեբաստիա Սվաճյան փ. 32 շ. 25 բն., ՀՎՀՀ՝ 43064106:**

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ **ՀՀ, Կոտայքի մարզ ք. Աբովյան
Հանրապետության պ. թիվ 22/1/1:**

Թույլտվության գործողության ժամկետը՝ **01 հունվարի 2022թ.-ից մինչև 31
դեկտեմբերի 2022թ.-ը:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2022 թվականի N 3587

**«ԱՐԱՄ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ» ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ
ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Արավյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 24-Ն որոշման, հիմք ընդունելով «Արամ Վարդևանյան Գևորգի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2022 թվականի նոյեմբերի 07-ի N Բ-5694)։

1. «Արամ Վարդևանյան Գևորգի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2022 թվականի ընթացքում Արավյան համայնքի Առինջ գյուղի Գ թաղամասի 9-րդ փողոցի թիվ 2 առևտրի սրահի վաճառատեղում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 34 կցվում է)։

2. «Արամ Վարդևանյան Գևորգի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Արավյանի համայնքապետարանի 900105002985 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 50 000 (հիսուն հազար) դրամ։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Արամ Վարդևանյան Գևորգի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. նոյեմբերի 10
ք. Արավյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԹՄԱ - 34

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ
ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ
ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

Տրված՝ 10 նոյեմբերի 2022թ.

Թույլատրված գործունեության անվանումը՝

Թանկարժեք մեքուղներից պատրաստված իրերի առք ու վաճառք:

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպարավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝

«Արամ Վարդևանյան Գևորգի» անհատ ձեռնարկատեր, ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Բաղրամյան փ. 31, ՀՎՀՀ՝ 83500674:

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ **ՀՀ Կոտայքի մարզ Առինջ գյուղ Գ թաղամաս 9-րդ փողոց թիվ 2 առևտրի սրահ:**

Թույլտվության գործողության ժամկետը՝ **01 հունվարի 2022թ.-ից մինչև 31 դեկտեմբերի 2022թ.-ը:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2022 թվականի N 3586

**ՌՈՒՔԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, հիմք ընդունելով Ռուբիկ Խաչատրյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի հոկտեմբերի 14-ի N Բ-5208), հաշվի առնելով Արովյան համայնքի ղեկավարին կից Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 8-ի N 11 արձանագրությունը.

1. Թույլատրել Ռուբիկ Խաչատրյանին կնքելու իր խնամարկյալին՝ անգործունակ Տիգրան Ռուբիկի Խաչատրյանին (ծնված՝ 20.02.1981թ.) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2020 թվականի հուլիսի 8-ի N 08072020-07-0147 և N 08072020-07-0148 վկայականներ) Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր գյուղի վարչական տարածքում գտնվող 07-049-0226-0063 և 07-049-0226-0062 կադաստրային ծածկագրերով գյուղատնտեսական նշանակության հողամասերի՝ անգործունակին պատկանող բաժնեմասերի օտարման գործարք:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռուբիկ Խաչատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ



2022թ. նոյեմբերի 10

ք. Արովյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2022 թվականի N 3585

**«ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ» ԿՈՆՑԵՐՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ Զ. ԱՆԴՐԱՆԻԿԻ
ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ» ԿՈՆՑԵՐՆ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի հայտը (մուտք՝ 2022 թվականի նոյեմբերի 10-ի N S-1359).

1. «ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ» ԿՈՆՑԵՐՆ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 07-002-0117-0098-001 կադաստրային ծածկագրով բազմաբնակարան բնակելի շենքի վերակառուցման նախագծման թույլտվություն (նախագծման թույլտվությունը կցվում է):
2. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ» ԿՈՆՑԵՐՆ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱՐԱՅԱՆ

2022թ. նոյեմբերի 10
ք. Արովյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԶԱՍԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԴԱՆՔ)

N 627 «10» նոյեմբերի 2022թ.

Օբյեկտ	բազմաբնակարան բնակելի շենքի վերակառուցում (օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, վերանորոգում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)	
	«Աշխատանքային նախագիծ» (բարձր ռիսկայնության, IV կատեգորիա) նախագծային փաստաթղթերի մշակման համար (հակիրճ բնորոշումը, հզորությունը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), ճախագծման փուլերը և այլն)	
Գտնվելու վայրը	ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, ք. Աբովյան Ջ. Անդրանիկի փողոց 10., ծածկագիր՝ 07-002-0117-0098 (մարզի, համայնքի, փողոցի անվանումները շենքի համարը, հողամասի ծածկագիրը)	
Կառուցապատող	«ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ» ԿՈՆՑԵՐՆ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՀՀ, ք.Երևան Կենտրոն Թումանյան 21. հեռ. +37498100008) (կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)	
Առաջադրանքի տրամադրման հիմքը	Կառուցապատողի հայտը, անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման N 31102022-07-0131 վկայական՝ տրված 31.10.2022թ., էսքիզային նախագիծը (կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)	
Առաջադրանքի գործողության ժամկետը	երեք տարի (ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31-րդ կետին համապատասխան)	
Ն Ա Ն Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ս Ի Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ը		
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)		
1.Հողամասը գտնվում է	նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման (հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)	
2.(*). Հողամասի չափերը	0,21476 հա (հողամասի սահմանները՝ կոորդինատային նշանարմամբ, մակերեսը, (հա))	
3. Հողամասի առկա վիճակը	Հողամասը ծանրաբեռնված է (ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, ճանաչողությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կամայապատումը, բարեկարգումը և այլ)	
4.(*). Տրանսպորտային պայմանները	ներհամայնքային նշանակության ճանապարհ (ճանապարհների առկայությունը, ներառությամբ տրամագոտի մոտեցումները և այլն)	
5.(*). Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցողիներ: (գրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) (նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)	
6.(*). Կից հողամասեր	Հարևանությամբ գտնվող բնակելի տներ, հողամասեր և տարածքներ (կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)	
7.Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)	Առկա չեն (հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)	
8.(*). Հատակագծային սահմանափակումներ	Հաշվի առնել կից տարածքներում առկա և նախատեսվող կառուցապատումը (տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրամադրային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)	
Ն Ա Ն Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ս Ի Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ը		
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)		
9.Շարտարապետահատակագծային պահանջներ	մշակել նախագիծ՝ համայնք Աբովյան, ք. Աբովյան Ջ. Անդրանիկի փողոց 10 հասցեում գտնվող հողամասում՝ բազմաբնակարան բնակելի շենքի վերակառուցում՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով տրված հողամասի սահմաններում: (ելելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գույնային լուծումների վերաբերյալ)	
9.1. (*) Օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)	ըստ նորմերի	
9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)	ըստ նորմերի	
9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)	ըստ նախագծի (սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀ, II-6.02-2006 «Մեյսմակայուն շինարարություն.Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն))	
9.4. կառուցապատման խտության գործակիցը	ըստ նորմերի (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)	
9.5. կառուցապատման տոկոսը	ըստ նորմերի (կառուցապատվող (ամբարանային) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)	
9.6. կամաչապատման տոկոսը	ըստ նորմերի (կամաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)	
9.7. այլ պահանջներ	• Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները	

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների բանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

Առկա չէ

11. Ստորգետնյա, կիսանկյուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

Համաձայն նորմերի

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում

Կցվում է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում

Կցվում է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

Կցվում է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

Կցվում է

(համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

Առկա չէ

12.6. աղբահանություն

համայնքային

13. Տարածքի ինժեներական մախսպատրաստում

Կազմակերպել տարածքի ջրահեռացում:

(ոնեյնֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

Ազատ տարածք բարեկարգել և կանաչապատել

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փորք ձևեր, ցանկապատում, գոլազդ և այլն)

15. Շինարարական նյութեր

Երկաթբետոնե տարրեր, քարե շար, ապակի, մետաղական տարրեր:

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ

Հատ նախագծի

(արտակարգ իրավիճակներում մարդկանց օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ

Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

ապահովել հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժը

19. Շրջակա միջավայրի պահպանում

ապահովել շրջակա միջավայրի պահպանման համապատասխան միջոցառումները

(շրջակա միջավայրի վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

Հստ նորմերի

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտային անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջարկների գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

երեք տարի, ճարտարապետական մաս, կոնստրուկտիվ մաս

(ԼՂՎում են առաջարկների գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

Լ Բ Ա Յ Ո Ւ Յ Ի Չ Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ը

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, 21.06.2014թ. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» ՀՀ օրենք

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

Համաձայնեցում Արմյան համայնքի ղեկավարի հետ

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ Էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջարկների փոփոխման հնարավորությունը՝ ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

Նորմերի համաձայն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումներ

- Համաձայնեցում Արմյան համայնքի ղեկավարի հետ:
- Մինչև նախագծային աշխատանքները սկսելը համաձայնություն ձեռք բերել տվյալ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատերերի (օգտագործողների) հետ
- Համաձայնեցում հարևան հողամասի սեփականատեր(երի) (օգտագործող(ներ)) հետ

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահպանումներ տեղադրում

չի պահանջվում

27. Այլ պայմաններ

- Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահին 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին:
- Շինությունը նախագծել ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014թ. ՀՀՀՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային ել գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 263-Ն հրամանով հաստատված դրույթներին համապատասխան:
- Նախագիծը ներկայացնել համաձայնեցման երկու օրինակից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԽՎՅԱՆ ՀԱՍՏԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ԷՂՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

Կ.Տ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2022 թվականի N 3584

**«ՄԻԳ ՏԵԽՍԱԿԱՍԱՐԿՈՒՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՊԱՀԵՍՏԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 և 2021 թվականի ապրիլի 15-ի N 600-Ն որոշումների, Արմվյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 26-Ն և հունիսի 29-ի N 81-Ա որոշումների, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալի 22.09.2022 թվականի N 06/11.3/10409-2022 գրությունը և «Միգ Տեխսպասարկում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի լիազորած անձ Էդգար Գևորգյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի օգոստոսի 15-ի N S-957)։

1. Թույլատրել փոփոխելու «Միգ Տեխսպասարկում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2021 թվականի ապրիլի 8-ի N 08042021-07-0095 վկայական) Արմվյան համայնքի Բալահովիտ գյուղի 8-րդ փողոցի թիվ 15 հասցեում գտնվող 574.1 քառակուսի մետր ներքին մակերեսով (համաձայն «ԷՅ ԷՄ ԹԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2022 թվականի օգոստոսի 15-ին կազմված հատակագծի, արտաքին մակերեսը 619.6 քառակուսի մետր) արտադրական նշանակության պահեստի գործառական նշանակությունը և առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի ու նախագծային փաստաթղթերի, ներքին հարդարման աշխատանքներն ավարտելուց հետո այն օգտագործել որպես հասարակական նշանակության ավտոտեխսպասարկման կայան։

2. «Միգ Տեխսպասարկում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է Արմվյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 204 900 (երկու հարյուր չորս հազար ինը հարյուր) դրամ՝ որպես անշարժ գույքի գործառական նշանակության փոփոխության ծառայության վճար։

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. նոյեմբերի 10
ք. Արմվյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2022 թվականի N 3583

**ԱՐՏՈՒՐ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՊԱՐՍՊԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Արտվյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 25-Ն որոշման, հաշվի առնելով Արտուր Խաչատուրյանի լիազորած անձ Հրայր Մարտիրոսյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի նոյեմբերի 02-ի N Բ-5568)։

1. Ձևակերպել կառուցապատող Արտուր Խաչատուրյանի կողմից իրականացված Արտվյան համայնքի Առինջ գյուղի Պ. Դուրյան թաղամասի 15-րդ փողոցի 25 հասցեում գտնվող բնակելի տան և պարսպի կառուցման շահագործման թույլտվությունը (շահագործման թույլտվությունը կցվում է)։

2. Արտուր Խաչատուրյանը պարտավոր է Արտվյանի համայնքապետարանի 900105201355 հաշվեհամարին մուծել 14 000 (տասնչորս հազար) դրամ տեղական վճար՝ շահագործման թույլտվություն տրամադրելու համար։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. նոյեմբերի 10
ք. Արտվյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ԱՐՈՎՅԱՆ
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ)

N 179 « 10 » նոյեմբերի 2022 թ.

Կառուցապատող Արտուր Խաչատուրյանի, հեռ. + 374 91 06 00 80 կողմից

(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական
անձի անունը, ազգանունը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Կառուցված քնակելի տունը և պարիսպը

(օբյեկտի անվանումը)

որը գտնվում է Կոտայքի մարզ Արովյան համայնք, գյուղ Առինջ Պ. Դուրյան թաղամաս 15 - րդ փողոց 25 հասցեում

(օբյեկտի տեղադրությունը, հասցեն)

համարվում է ավարտված և պատրաստ է շահագործման, որի՝

1. նախագծային փաստաթղթերը մշակվել են « ՀԱՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ » ՍՊԸ-ի կողմից

(նախագծային կազմակերպության անվանումն օրենքով սահմանված դեպքերում՝ լիցենզիայի համարը,
անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, լիցենզիայի համարը)

2. շինարարությունն սկսվել է Առինջ համայնքի ղեկավարի կողմից

(շինարարության թույլտվություն տվող մարմնի անվանումը)

Տրված « 14 » սեպտեմբերի 2020 թ. N 224 շինարարության թույլտվության համաձայն.

3. շինարարությունն իրականացվել է տնտեսական եղանակով, Արտուր Խաչատուրյանի կողմից

(զվխավոր կապալառուի անվանումը)

4. օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝ քնակելի տան մակերեսը կազմում է 291 քմ, պարիսպը 28 քմ

5. հատուկ պայմանները ոչ էական շեղումներով

ՀԻՄՔԵՐ՝

1) կառուցապատողի դիմումը « 02 » նոյեմբերի 2022 թ.

2) ընդունող հանձնաժողովի ակտը « 21 » հոկտեմբերի 2022 թ.

3) կատարողական փաստաթղթերի ցանկը կամ շինության տեխնիկական վիճակի մասին
համապատասխան հետազննության դրական եզրակացությունը 4 թերթ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

Կ.Տ.



« 10 » նոյեմբերի 2022 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2022 թվականի N 3582

**«ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՈՎՅԱՆԻ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱԼԻՐ
ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱԴԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՅՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի.

1. Հայտարարել մրցույթ «Գագիկ Ծառուկյանի անվան Արովյանի սպորտի և մշակույթի համալիր կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:
2. Մրցույթը կկայանա 2022 թվականի դեկտեմբերի 15-ին:
3. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Է. ԲԱՐԱՅԱՆ

2022թ. նոյեմբերի 10
ք. Արովյան



ՀԱՅՏԱՐԱՐ ՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Արժույթի համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ «Գագիկ Ծառուկյանի անվան Արժույթի սպորտի և մշակույթի համալիր կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Գործառույթներն են՝ իրականացնում է կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը՝ այդ թվում՝ տարբեր բնույթի մշակութային, միջոցառումների, ցուցահանդեսների, կինոցուցադրումների, թատերական ներկայացումների կզմակերպումը, արվեստի գործիչների և պատանի ստեղծագործողների ցուցահանդեսների, համազգային մրցույթ-փառատոնների, այլ մշակութային միջոցառումների կազմակերպումը, մարզիկների սպորտային ունակությունների զարգացումն ու ֆիզիկական դաստիարակության ապահովումն՝ հաշվի առնելով նրանց պահանջմունքները, ունակությունները, կազմակերպված խմբերի միջոցով երեխաների և պատանիների սպորտի տարբեր ձևերի, պարարվեստի, երաժշտության և այլ հմտությունների ուսուցման իրականացումը: Իրականացնում է կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

- 1) բարձրագույն կրթություն.
- 2) համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.
- 3) պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր):

Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

- 1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- 2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
- 3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- 4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.
- 5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
- 6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթը կկայանա 2022 թվականի դեկտեմբերի 15-ին ժամը 10:00-ին Արժույթի համայնքապետարանի աշխատակազմի շենքի նիստերի դահլիճում (ք. Արժույթ, Բարեկամության հր-1):

Մրցույթների համար դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 05.12.2022թ.:

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմ են ներկայացնում՝

- 1) դիմում
 - 2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.
 - 3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.
 - 4) ինքնակենսագրություն.
 - 5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները, որոնք աշխատակազմը համեմատում է բնօրինակների հետ և ընդունում դրանք:
 - 6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
 - 7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):
- Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:
- Փաստաթղթերն ընդունվում են Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմում (ք. Աբովյան, Բարեկամության հր-1, 2-րդ հարկ, իրավաբանական բաժին հեռ. 060 53-64-41, 060 53-64-27) ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 17:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2022 թվականի N 3581

**ԱՐՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԵՎՏՐԻ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ,
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԳՈՎԱԶԴԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ
ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանով հաստատված կարգի.

1. Հայտարարել մրցույթ Արովյանի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնի պետի տեղակալի (ծածկագիր՝ 2.2-3) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.
2. Մրցույթը կկայանա 2022 թվականի դեկտեմբերի 20-ին:
3. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. նոյեմբերի 10
ք. Արովյան



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Արժվյան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Արժվյանի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնի պետի տեղակալի (ծածկագիր՝ 2.2-3) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Գործառույթներն են՝ բաժնի պետի հանձնարարությամբ կազմակերպում է ճանապարհային անվտանգ երթևեկությունը համայնքային ենթակայության ճանապարհների վրա, մասնակցում է համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքների ու համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների և կազմակերպությունների գործունեության կազմակերպմանը, ներհամայնքային ուղևորափոխադրումների երթուղիների մրցույթների անցկացմանը, բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է համայնքի տարածքում մարդատար տաքսիների ծառայություն իրականացնելու, ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման և հանելու, ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի, բացօթյա վաճառք կազմակերպելու, համայնքի առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) ժամը 24:00-ից հետո աշխատելու, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառքի, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի, խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի, հանրային սննդի կազմակերպման և իրացման, համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու, քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու, ինչպես նաև մասնավոր գերեզմանատան շահագործման, արտաքին գովազդ տեղադրելու, համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման, տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու, սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվությունների որոշումների նախագծերը, բաժնի պետի հանձնարարությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով հսկողություն է իրականացնում առևտրի և ծառայությունների ոլորտում տնտեսվարող սուբյեկտների, համայնքում արտաքին գովազդի ոլորտի գործունեությունների նկատմամբ:

Իրականացնում է տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1) բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

2) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Հանրային ծառայության մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Առևտրի և ծառայությունների մասին», «Գովազդի մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

5) ռուսերեն լեզվի տիրապետում (կարդում, կարողանում է բացատրվել):

Մրցույթը կկայանա 2022 թվականի դեկտեմբերի 20-ին ժամը 10:00-ին Արմյանի համայնքապետարանի աշխատակազմի շենքի նիստերի դահլիճում (ք. Արմյան, Բարեկամության հր-1):

Մրցույթի համար դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 05.12.2022թ.:

Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում մրցութային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս).

2) տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակի հետ միասին.

3) արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին.

4) մեկ լուսանկար 3x4 սմ չափսի.

5) անձնագրի պատճենը:

Փաստաթղթերն ընդունվում են Արմյանի համայնքապետարանի աշխատակազմում (ք. Արմյան, Բարեկամության հր-1 հեռ. 060 53-64-41, 060 53-64-27) կամ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԾՀ բաժնում (ք. Հրազդան, հեռ. 0223-2-34-13, 0223-2-73-01) ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 17:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԴԱՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2022 թվականի N 3580

**«ԱՐԴԱՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի.

1. Հայտարարել մրցույթ «Արովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:
2. Մրցույթը կկայանա 2022 թվականի դեկտեմբերի 13-ին:
3. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. նոյեմբերի 10
ք. Արովյան



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Արժվյան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ «Արժվյանի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

Գործառույթներն են՝ կազմակերպում է համայնքի կոմունալ տնտեսության կառավարումը՝ այդ թվում աղբահանություն, ոռոգման աշխատանքների իրականացում, փողոցային լուսավորության ապահովում, քաղաքային աղբավայրերի սպասարկում, փողոցների նշագծում, լուսացույցերի անխափան աշխատանքներ, կանաչ տարածքների պահպանման աշխատանքներ:

Իրականացնում է կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

- 1) բարձրագույն կրթություն.
- 2) համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.
- 3) պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր):

Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

- 1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- 2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
- 3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- 4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.
- 5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
- 6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթը կկայանա 2022 թվականի դեկտեմբերի 13-ին ժամը 10:00-ին Արժվյանի համայնքապետարանի աշխատակազմի շենքի նիստերի դահլիճում (ք. Արժվյան, Բարեկամության հր-1):

Մրցույթների համար դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 05.12.2022թ.:

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Արժվյանի համայնքապետարանի աշխատակազմ են ներկայացնում՝

- 1) դիմում
- 2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.
- 3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.
- 4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները, որոնք աշխատակազմը համեմատում է բնօրինակների հետ և ընդունում դրանք:

6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում): Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են Արովյանի համայնքապետարանի աշխատակազմում (ք. Արովյան, Բարեկամության հր-1, 2-րդ հարկ, իրավաբանական բաժին հեռ. 060 53-64-41, 060 53-64-27) ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 17:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2022 թվականի N 3579

**ԱՐՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի.

1. Հաստատել Արովյանի համայնքապետարանի աշխատակազմում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. նոյեմբերի 09
ք. Արովյան



Հավելված
Արմյան համայնքի ղեկավարի
2022 թվականի նոյեմբերի 09-ի
N 3579 որոշման

ԿԱՐԳ

ԱՐՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Արմյանի համայնքապետարանի աշխատակազմում (այսուհետ՝ աշխատակազմ) քաղաքացիների ընդունելության կազմակերպման ընթացակարգը:
2. Քաղաքացիների ընդունելություն անցկացնում են Արմյան համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին:
3. Աշխատակազմում քաղաքացիների ընդունելությունների կազմակերպման և անցկացման գործընթացը համակարգում է աշխատակազմի քարտուղարը:
4. Աշխատակազմի քարտուղարը մասնակցում է ընդունելություններին և ընթացքն արձանագրում է ընդունելության մատյանում, որը կարված, կնքված և համարակալված է (մատյանի օրինակելի ձևը կցվում է՝ Ձև 1):
5. Ընդունելության համար քաղաքացիները կարող են դիմել շաբաթվա աշխատանքային օրերին Արմյանի քաղաքացիների սպասարկման գրասենյակում (այսուհետ՝ ՔՍԳ) լրացնելով ընդունելության գրանցման թերթիկները (թերթիկների օրինակելի ձևերը կցվում են՝ Ձև 2, Ձև 3), որոնք տրամադրվում են ՔՍԳ-ի աշխատակցի կողմից: Թերթիկներին կցվում են ընդունելության խնդրին առնչվող փաստաթղթեր (առկայության դեպքում):
6. ՔՍԳ-ի աշխատակիցը յուրաքանչյուր օրվա ժամը 16:30-ից հետո քաղաքացիների կողմից լրացված ընդունելության գրանցման թերթիկները և կից փաստաթղթերը ներկայացնում է աշխատակազմի քարտուղարին:
7. Ընդունելությունից հետո ընդունելության գրանցման թերթիկները պահվում են դրանց համար նախատեսված թղթապանակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄՈՏ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. Համայնքի ղեկավարի մոտ քաղաքացիների ընդունելությունն իրականացվում է յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը՝ ժամը 10:00-ից:
Ընդունելության օրը համայնքի ղեկավարի բացակայության (կամ այլ չնախատեսված) դեպքում ընդունելությունը տեղափոխվում է շաբաթվա մեկ այլ օր, որի մասին ծանուցվում են ընդունելությանը հերթագրված քաղաքացիները:
9. Աշխատակազմի քարտուղարն իրեն ներկայացված ընդունելության գրանցման թերթիկները նույն օրը հասցեագրում է համապատասխան ոլորտի համար պատասխանատու պաշտոնատար անձին՝ քաղաքացու բարձրացրած հարցի ուսումնասիրման, նախնական քննարկման և լուծումներ առաջարկելու նպատակով:
10. Հարցի նախնական քննարկման համար ժամկետ է տրվում մինչև յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի օրը՝ ժամը 16:30-ը:
11. Եթե հարցի նախնական քննարկման արդյունքում քաղաքացու խնդիրը լուծվում է, ապա պատասխանատու պաշտոնատար անձը ընդունելության գրանցման թերթիկը՝ համապատասխան գրառումով, վերադարձնում է աշխատակազմի քարտուղարին:

12. Եթե հարցի նախնական քննարկման արդյունքում քաղաքացու խնդիրը չի լուծվում, ապա պատասխանատու պաշտոնատար անձը ընդունելության գրանցման թերթիկում հակիրճ նկարագրում է գործի հանգամանքները և վերադարձնում է աշխատակազմի քարտուղարին:

13. Յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի օրը՝ ժամը 16:30-ից հետո աշխատակազմի քարտուղարն ընդունելության գրանցման թերթիկները՝ գործի հանգամանքների հակիրճ նկարագրությամբ, ներկայացնում է համայնքի ղեկավարին:

14. Ընդունելության գրանցման թերթիկներն ուսումնասիրելուց հետո համայնքի ղեկավարը տալիս է համապատասխան ցուցումներ, որից հետո աշխատակազմի քարտուղարը կազմում է ընդունելության համար հերթագրված քաղաքացիների ցուցակը: Նույն օրը ցուցակը հանձնվում է ՔՍԳ-ի աշխատակցին, ով հեռախոսազանգի կամ էլ փոստի միջոցով հերթագրված քաղաքացիներին ծանուցում է ընդունելության օրվա և ժամի մասին:

15. Քաղաքացին ընդունելությանը ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով, որի լուսապատճենը կցվում է ընդունելության գրանցման թերթիկին:

16. Ընդունելության ժամանակ բարձրացված հարցի լուծման համար համայնքի ղեկավարի տված հանձնարարականները աշխատակազմի քարտուղարը փոխանցում է համապատասխան ոլորտի համար պատասխանատու պաշտոնատար անձին:

17. Համայնքի ղեկավարի մոտ քաղաքացիների ընդունելության ընթացքը գրանցվում է նաև Համայնքային Կառավարման Տեղեկատվական Համակարգի (ՀԿՏՀ) «Ընդունելություններ» բաժնում:

18. ՀԿՏՀ-ի միջոցով հանձնարարական ստացած պաշտոնատար անձը հանձնարարականի կատարման համար սահմանված ժամկետում զեկուցագիր է ներկայացնում հանձնարարականի կատարման ընթացքի և արդյունքների մասին:

19. Ընդունելության ժամանակ բարձրացված հարցի լուծման վերջնական արդյունքները հաշվառվում են ընդունելությունների մատյանում:

20. Վարչական ղեկավարների մոտ քաղաքացիների ընդունելությունն իրականացվում է ըստ անհրաժեշտության:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՈՏ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

21. Համայնքի ավագանու մոտ քաղաքացիների ընդունելությունն իրականացվում է յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրը՝ ժամը 16:00-ից:

22. Աշխատակազմի քարտուղարն իրեն ներկայացված ավագանու մոտ ընդունելության գրանցման թերթիկների հիման վրա կազմում է հերթագրված քաղաքացիների ցուցակը:

23. Յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը՝ ժամը 16:30-ից հետո ավագանու անդամները ՔՍԳ-ի աշխատակցի կողմից հեռախոսազանգի և/կամ ՀԿՏՀ հաղորդագրության միջոցով տեղեկացվում են ավագանու մոտ ընդունելության համար հերթագրված քաղաքացիների ցուցակի մասին:

24. Ավագանին քաղաքացիների ընդունելությունն անցկացնում է աշխատակազմի նիստերի դահլիճում:

25. Ընդունելության ժամանակ բարձրացված հարցերը և տրված պատասխաններն աշխատակազմի քարտուղարի կողմից արձանագրվում են ավագանու մոտ ընդունելության մատյանում:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՅՅԱՆԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

N ^o	Ամիս, Ամսաթիվ	Անուն, Ազգանուն	Հասցե, հեռախոս, Էլ. փոստ	Հարցի համառոտ բովանդակությունը	Պատասխանը, հանձնարարականը	Ընթացքը, լուծումը
1	2	3	4	5	6	7

ԹԵՐԹԻԿ

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄՈՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ**

«_____» _____ 20 թ.

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Հասցե, հեռախոս, էլ.փոստ _____

Հարցի համառոտ բովանդակությունը _____

Քաղաքացու ստորագրությունը _____

ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Պատասխանատու պաշտոնատար անձը _____

Քննարկման ժամկետը _____

Քննարկման արդյունքը _____

Պատասխանատու պաշտոնատար անձի ստորագրությունը _____

«_____» _____ 20 թ.

ԹԵՐԹԻԿ

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՈՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

«_____» _____ 20 թ.

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Հասցե, հեռախոս, էլ. փոստ _____

Հարցի համառոտ բովանդակությունը _____

Քաղաքացու ստորագրությունը _____



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2022 թվականի N 3578

ՔՐԻՍՏԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, 48-րդ հոդվածի, Արովյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի N 46-Ա և N 47-Ա որոշումների, հիմք ընդունելով Քրիստինե Գրիգորյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի հոկտեմբերի 26-ի N Ք-5397) և Արովյան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 07-ի նիստի N 7 արձանագրությունը.

1. Արովյան համայնքի 2022 թվականի բյուջեով նախատեսված «Սոցիալական օգնություններ» (բաժին 10, խումբ 7, դաս 1) նախահաշվի «4729» հոդվածից 100 000 (հարյուր հազար) դրամ փոխանցել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 1150036910418900 տարանցիկ հաշվեհամարին՝ Քրիստինե Գրիգորյանին սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Քրիստինե Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ



2022թ. նոյեմբերի 09

ք. Արովյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2022 թվականի N 3577

**ԳԵՎՈՐԳ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, 48-րդ հոդվածի, Արովյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի N 46-Ա և N 47-Ա որոշումների, հիմք ընդունելով Գևորգ Նավասարդյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի հոկտեմբերի 11-ի N Բ-5138) և Արովյան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 07-ի նիստի N 7 արձանագրությունը.

